Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի

անվան թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքի բացահայտումը

Ուսուցիչ՝ Զուլիետա Փանոսյան

Ղեկավար՝ Սիդա Խալաթյան

Եղեգնաձոր 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը 5

Գլուխ 2. Աշակերտի կրթական կարիքի բացահայտումը մայրենիի դասի շրջանակում 7

Դասի պլան 14

Եզրակացություն 19

Օգտագործված գրականության ցանկ 21

Ներածություն

Մեր՝ ուսուցիրներիս առջև դրված կարևորագույն **խնդիրներից մեկը սովորողների կրթական կարիքների բացահայտումն է:** Մարդու բազմակողմանի զարգացման հիմքը դրվում է կրտսեր դպրոցում: Երեխան մուտք է գործում դպրոց իր կյանքի դժվար և բեկումնային շրջաններից մեկի ընթացքում : Այս տարիքի երեխային նկարագրելիս՝ որպես առաջնային բնութագիր կարելի է ընդգծել մանկական անմիջականության կորուստը: Որպես ճգնաժամի առանցքային բնութագիր կարելի է նշել երեխայի անձի ներքին և արտաքին կողմերի տարանջատման սկիզբը: Երեխայի նախկին անմիջականությունն ու միամտությունը ցույց էին տալիս, որ երեխայի արտաքին և ներքին աշխարհները համընկնում էին: Անմիջականության կորուստ նշանակում է , որ վարքաձևում հայտնվում են ինտելեկտուալ բաղադրամասեր, որոնք ճեղքում են ապրումներն ու անմիջական վարքաձևերը: Նա իրեն ,,մեծահասակ՛՛ զգալու, հասուն լինելու, ,,մեծական՛ ՛վարքագծեր դրսևորելու, ինքնուրույն որոշումներ ընդունելու, կարծիք հայտնելու և այլնի սուր ձգտում ու պահանջմունք է ունենում: Դպրոց հաճախելը երեխայի համար սոցիալական միջավայրի և դիրքի փոփոխություն է, սեփական սոցիալական դիրքի ձեռքբերում, ինչն էլ արդեն մեծանալու նշան է: Ինչպես նշում է հայտնի հոգեբան Լ. Բոժովիչը 7 տարեկանի ճգնաժամը երեխայի ես-ի ծնվելու շրջան է:

Հետազոտական աշխատանքի **նպատակը** հետազոտության վերլուծական և դիտարկման մեթոդների կիրառության և բազմամյա աշխատանքային փորձի համատեղման միջոցով վեր հանել աշակերտների կրթական կարիքները մայրենի առարկայի շրջանակներում:

Թեմայի **բովանդակությանը** համապատասխան առաջադրել եմ հետազոտական

հարց, թե ինչպե՞ս է կրթական կարիքների առկայությունը ազդում սովորողների ուսումնառության վրա։

Թեմայի **կարևորությունը և արդիականությունը** ակնհայտ է, քանի որ կրթական բնագավառի զարգացմանը զուգահեռ առաջանում են նոր կրթական կարիքներ և մեր՝ ուսուցիչներիս համար կարևոր է դառնում դրանց բացահայտումը և կրթական հետաքրքրությունների և նպատակների ձևավորմանը, դառնում է շարժիչ ուժ, մոտիվացիոն մեխանիզմ, որը դրդում է աշակերտին ավելի մեծ ոգևորությամբ մասնակցել դասին։

Կրթական կարիքները **մայրենիի լեզվի** շրջանակում բացահայտելուց և ազդեցությունը ուսումնառության վրա պարզելուց հետո ուսուցչի համար կարևոր է դառնում դասընթացի ճիշտ և գրագետ կազմակերպումը, որը պետք է հիմնված լինի կարիքների բավարարման ուղիների մշակման վրա։

Տարրական դասարանների **մայրենի լեզվի** դասընթացում առաջատար տեղ է գրավում ընթերցանությունը։ Դրա **նպատակն է**՝ զարգացնել աշակերտների կարդալու և պատմելու կարողությունները, խոսքը, հարստացնել նրանց ճանաչողական գիտելիքներն ու բառապաշարը։

Ընթերցանությունը երեխային հնարավորություն է տալիս հարստացնել ճանաչողական գործունեության սեփական փորձը, զարգացնել տրամաբանական, հաղորդակցման, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական ունակությունները։ Իսկ հասկանալով ընթերցանությունն ակտիվացնում է մտածական գործընթացները և կարևոր նախապայման դառնում երեխաների արդյունավետ ուսուցման և ուսումնառության վրա։

Գլուխ 1. Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

<<Կրթական կարիք>> հասկացությունը բացատրելու համար նախ և առաջ պետք է հասկանալ, թե իրենից ինչ է ներկայացնում կարիքը: Կարիք հասկացության վերաբերյալ տարբեր մասնագետներ տվել են մի շարք սահմանումներ, որոնցից առանձնացրել եմ մի քանիսը: Ըստ Տ.Ա. Գայդաենկոյի՝ <<Կարիքը անձի կողմից զգացած որևէ բանի պակասի զգզցումն է >>:1 Ըստ Վ.Ս. Բեզռուկովոյի՝ <<Կարիքը ինչ-որ բանի պահանջմունքի ձև է , որը զգացվում է որպես աղքատություն,այն բավարարելու կարողություն>>:2 Կառլ Մաքսը <<կարիք>> հասկացության տակ հասկանում էր մարդու՝ կենսական կարևոր բարիք ստանալու ցանկությունը: Օրինակ՝ սննդի կարիք զգալով, մարդը կարիք ունի ուտելու մակարոնեղեն, պահածոներ կամ այլ ուտեստներ և ապրանքներ, որոնք նա ամենաշատն է սիրում:3

Կարիքը սովորաբար ընկալվում է ինչ-որ բանի բացակայության գիտակցումը: Տարբեր դասակարգումներում առանձնացվում են նյութական և հոգևոր, ֆիզիոլոգիական և սոցիալական կարիքները և այլն:4

Վերը նշված սահմանումներին ծանոթանալուց և **<<կարիք>>** հասկացության իմաստն ու բովանդակությունը բացահայտելուց հետո անդրադառնանք **<<կրթական կարիք >>** հասկացությանը:Կարիքների շարքում առանձնահատուկ կարևորություն ունի **կրթական կարիքը**: Կրթական կարիքը կարող է դրսևորվել որպես մարդու՝ գոյատևման հետ կապված գործունություն իրականացնելու գիտելիքների և հմտությունների պակասի զգացում:5 Կրթական կարիքներն այլ կերպ կարող ենք անվանել **սովորողների կարիքներ**: Սրանք այն կարիքներն են, որոնք առկա են յուրաքանչյուր սովորողի մոտ, երբ նրանք ստանում են որևէ աստիճան կամ

կրթություն ընդհանրապես: Առողջ մթնոլորտը, լավ ուսուցիչները, լավ ուսումնական ռեժիմը,լավ առցանց ուսուցման հավելվածը միասին կարող ենք անվանել **սովորողների կրթական կարիքներ:**

Տարբեր սովորողներ կարող են ունենալ տարբեր կրթական կարիքներ: Կան նաև սովորողների խմբեր, ովքեր ունեն կրթության առանձնահատուկ կարիքներ: Սովորողների բոլոր կարիքները պետք է համարվեն կարևոր, իսկ կարիքների բավարարումը պետք է լինի ցանկացած երկրի կառավարության առաջնահերթությունը:

<<Կրթական կարիք>> հասկացության **բովանդակության** հիմքում ընկած է այն հարցերի պատասխանը, թե ինչու է կրթությունն անհրաժեշտ մարդուն և ինչպիսի կրթության կարիք ունի: Կարևոր է հասկանալ, որ հենց անձն է կրթական կարիքի կրողը, չնայած նրան, որ գործատուն, պետությունը կամ հենց ինքը կարող է վճարել սովորողի կրթության համար:

Առանձնացվում են կրթական կարիքների ձևավորման մի քանի մակարդակներ

- Անհատի
- Խմբի
- Հասարակության

Կարևոր նշանակություն ունի նաև կրթական կարիքի կատարած գործառույթները: Կրթական կարիքի գործառույթներից կարելի է առանձնացնել՝

- ձևավորում է կրթական հետաքրքրություններ և նպատակներ
- հանդես է գալիս որպես կրթական գործունեության պատճառ, դրա կարգավորման մոտիվացիոն մեխանիզմի հիմք
- առաջնորդում է կյանքի խնդիրների լուծման ճանապարհի ընտրության հարցում

- Այժմ **<<կարիք>> և <<կրթության կարիք>>** հասկացությունների վերաբերյալ պատկերացում կազմելուց հետո, բազմամյա աշխատանքային փորձը համատեղելով ստացված գիտելիքների հետ վեր հանենք **մայրենի առարկայի** ուսումնառության ընթացքում դիտված **կրթական կարիքները**:

Գլուխ 2. Աշակերտի կրթական կարիքի բացահայտումը մայրենիի դասի շրջանակում

Մայրենիի դասավանդման ընթացքում ուսուցողական նպատակներից բացի լուծվում է նաև դաստիարարչական լուրջ խնդիրներ՝ գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական և կամային մի շարք լավագույն հատկանիշների դաստիարակում և այլն: Այդ աշխատանքը իրականացվում է հիմնականում երկու ուղղությամբ՝ բուն դասագործընթացում, այսինքն՝ ուսուցման զուգընթաց և արտադասարանային ընթերցանության միջոցով:

Ինքնուրույն ընթերցանության եզրույթն առաջին հերթին նշանակում է ոչ դասարանային, այսինքն՝ տնային ընթերցանություն, ինչպես նաև ընթերցանություն ոչ դասագրքից: Հենց դա է երեխային դեպի գեղարվեստական գրականություն տանող ճանապարհը:

Կրտսեր դպրոցականի համար, որպես ընթերցանության միջոց, գոյություն ունի միայն դասագիրքը: Ինչ խոսք, դասագիրքը իր յուրահատուկ ստեղծագործություններով սովորողի համար մի ուրույն աշխարհ է, սակայն գաղտնիք չէ, որ երեխայի համար կարդալը մեծ մասամբ հաճելի զբաղմունք չէ : Այն աշխատատար գործընթաց է: Ընդ որում , անհրաժեշտ է առանձնացնել ընթերցանության երկու տեսակ՝ ընթերցանությունը որպես տառերի կոդավորում և ընթերցանությունը որպես տեղեկատվության ընկալման հնարավորություն:

Այս երկու ուղղություններից անհնար կամ անիմաստ է մեկի իրականացումը առանց մյուսի: Իսկ դա դեռևս նոր կարդալ սովորող կրտսեր դպրոցականի համար այնքան էլ դյուրընթաց առաջադրանք չէ:Սկզբում նա հիշում է բառերը: Բնագիրը տեսնում է ոչ թե տառերի կամ վանկերի այլ բառերի տեսքով: Ապա աստիճանաբար խորանում է մայրենիի աշխարհում, ինչն էլ մպաստում է անցնել վարժ, սահուն

ընթերցանությանը: Եվ բազմաթիվ վարժությունների վրա հիմնված աշխատանքը

տալիս է իր պտուղները, երեխան յուրացնում է դասագիրքը և սկսում հասկանալ կարդացածը: Արդեն ժամանակն է անցնել ինքնուրույն ընթերցանությունը:Դրա համար առաջին հերթին հարկավոր է երեխայի հոգում արթնացնել սեր գրքի և ընթերցանության նկատմամբ, ձգտել, որպեսզի գիրք ընթերցելը նրա համար դառնա իսկական հոգեկան պահանջ: Որքան վաղ է երեխան սկսում կարդալ, այնքան ավելի շուտ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհ և նպաստում ընթերցողական կարողությունների կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը և լեզվական ունակությունների զարգացմանը: Առանց դրանց թերի կմնա անհատի ինքնակրթությունը:

Մայրենիի դասերին գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր ենք արթնացնում մեր ժողովրդի և հայրենիքի հանդեպ, նրանց հաղորդակից դարձնել հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը:

Ինքնուրույն ընթերցանությունը կորված է բավարարելու տեղեկատվության բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալ ցանկացող այսօրվա աշակերտի հոգեկան պահանջները:Գիրքը դաստիարակում է դպրոցականի հոգևոր աշխարհը, ձևավորում բարոյական արժեքները: Հենց դրա միջոցով է իրականանում մեր սերնդի հոգևոր արժեքների փոխանցումը հաջորդ սերունդներին:

Ցավոք, մեր աշակերտների մեջ զգալի թիվ են կազմում գեղարվեստական գրականության նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չունեցող երեխաները: Դեռևս ոչ վաղ անցյալում գիրքը ընթերցելը անհրաժեշտություն էր, իսկ այսօր պատկերը բոլորովին այլ է: Աշակերտների մի մասի մոտ ընթերցանության նկատմամբ նվազումը պետք է բացատրել նաև տեղեկատվության աղբյուրների առատությամբ:

Յուրաքանչյուրին անհանգստացնում է ճիշտ, գիտկցորեն, սահուն, արտահայտիչ ընթերցողական ունակությունների ձևավորեւմը, քանի որ ընթերցանությունը մեծ

դեր է խաղում աշակերտի անձի զարգացման և կրթության հարցում:Շատ ուսուցիչներ

և ծնողներ անհանգստանում են, որ երեխան չի սիրում կարդալ: Այսօր գիտատեխնիկական առաջընթացը, հեռուստացույցը, համակարգիչը, համացանցը և տարաբնույթ համակարգչային խաղերը չնշում են երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ:

Ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, որպեսզի երեխան սիրի գիրքը:

Բանն այն է, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում և ազդում է մարդու մտավոր զարգացման վրա:

Դասվարները գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը: Իսկ ավելի դժվար է ձևավորել իսկական ընթերցող: Յուրաքանչյուր ընթերցանություն կազմակերպվում է այնպես, որ խթանի անձի զարգացմանը: Իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության:

Տարրական դպրոցում մեծ է ուսուցչի հեղինակությունը աշակերտների մեջ ինքնուրույն ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում: Սակայն ուսուցիրն ինչպես երեխային օգնում է դառնալ ինքնուրույն ընթերցող, այնպես էլ կարող է կոտրել երեխայի հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ, բավական է պարտադրանքն այդ ուղղությամբ:

Ինքնուրույն ընթերցանությունը լայն հնարավորություն է ընձեռնում սովորողի ճանաչողական գործընթացի զարգացմանը գրքի նկատմամբ հետաքրքրության դաստիարակության գործում: Թեման ուսումնասիրելով երեխան ինքնաբերաբար մտնում է ընթերցանության դաշտ և կապվում գրքին: Միայն կարդալ սովորեցնելը քիչ է : Ինչպես Ուշինսկին էր ասում <<Կարդալը դեռ ոչինչ չի նշանակում>>:

Ի՞նչ և ի՞նչպես կարդալ, սա է հարցի էությունը:

<u>Ընթերցանության խնդիրները այլ են</u>

- Ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և զարգացում:
- Ընթերցացիրության սահմանում:

- Գեղագիտական գրքեր ընտրելու, կարդալու, վերլուծելու կարողության զարգացում:
- Ձեռք բերած գիտելիքների ընդլայնում և խորացում:
- Աշակերտների հետաքրքրասիրությունների ձևավորում:
- Աշակերտների ճանաչողական գիտելիքների ձեռքբերում և այլն:

Ինքնուրույն ընթերցանության արձակ և չափածո ստեղծագործությունները ոչ թե կրկնվում են մայրենիի դասերին անցած նյութերը, այլ համալրում և հարստացնում են նրա գիտելիքները:

Կարդալով գրքում զետեղված հետաքրքրաշարժ պատմությունները և հեքիաթները, առակներն ու բանաստեղծությունները՝ երեխան կհանդիպի տարբեր հերոսների՝ մարդկանց և կենդանիների,կիմանա նրանց լավ ու վատ արարքների մասին, ձեռք կվերի բազում գիտելիքներ: Նյութը ընթերցելուց և վերլուծելուց հետո, աշխատանքի հսկողությունը և կողմնորշումը իրականացվելու են դասարանում՝ հարցերի քննարկման եղանակով:

Աշակերտները կարող են այդ աշխատանքը կատարել բանավոր, գրավոր, անհատապես, ենթախմբերով, ամբողջ դասարանով՝ վերջում կատարելով համապատասխան ընդանրացումներ: Ստեղծագործության գեղագիտական և

բարոյական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որպեսզի դասի ընթացքում նրանք.

- խորհեն ընթերցածի շուրջ
- ապրումակցեն հերոսներին
- գնահատեն նրանց արարքն
- իմաստավորեն նրանց խնդիրները
- համեմատեն իրենց կյանքը գրական կերպարների կյանքի հետ
- ձգտեն կատարել իրենց ընկալած բարոյական նորմերին համապատասխան արժեքները

Երեխաների մեջ մեծ հետաքրքրություն և ակտիվություն է առաջանում, երբ դասանյութը վեր է ածվում երկխոսության կամ դերային խաղերի: Դրանք կարող են լինել շատ պարզ:

Օրինակ՝

Դասարանը բաժանվում է խմբերի և ուսուցիչը առաջադրում է.

<<Ո՞վ ավելի շատ կհիշի, կմտածի, տեքստում կգտնի…և այլն>>: Առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը, եթե գիտելիքների կրկնությունը կամ տեքստի վերարտադրումն իրականացվեն <<Բարձունքի նվաճումը>> խաղի տեսքով: Գրատախտակի մոտ են հրավիրվում թիմերի ներկայացուցիչները, որոնք ճիշտ պատասխանելով տրված հարցերին, բարձրանում են բուրգի աստիճաններով: Այն նկարված է գրատախտակին:

Դերային խաղերի ընթացքում պահանջվում է դերային կերպարանափոխություն և ներթափանցում ստեղծագործության հերոսի կերպարի մեջ: Ամենաարդյունավետ խաղի տեսակ է ամենահսկական թատերական ներկայացումը, որտեղ ևս տեղի է ունենում դերային կերպարանափոխություն: Ձևավորվում է պատասխանատվություն ընդհանուր գործի նկատմամբ:

Իսկ ինչպե՞ս է անց կացվում ինքնուր ույն ընթերցանության դասերը

Դրանք կարող են իրականացվել տարբեր կերպ՝ և բնագրի շուրջ աշխատանքով, և վիկտորինաների ձևով, և ստեղծագործական աշխատանքներով, ինչպես նաև խաղերի ջևով: Միայն այս դեպքում երեխան կարող է լիովին հասկանալ այս կամ այն ստեղծագործությունները: Այժմ ուսուցման մեջ մեծ տեղ է հատկացվում <<սովորել սովորեցնելու>> մեթոդին: Դա եզրահանգում է ինքնուրույնության զարգացմանը: Ուստի ուսուցիչը պետք է հնարավորություն տա, որ աշակերտները իրենց հարցերը ուղղեն միմյանց, վերլուծեն ու պատասխանեն, ինքնուրույնաբար հանգեն եզրակացությունների, արտահայտեն իրենց անձնական կարծիքները, հիմնավորեն դրանք, մի խոսքով՝ ակտիվորեն մասնակցեն իրենց գիտելիքների ձեռքբերմանը:

Այստեղ ուսուցիչը նպատակ չունի լեզվական խնդիրներ լուծելու ինչպես մայրենիի դասերին:

Նրա աշխատանքը պիտի վերաբերվի զուտ բնագրին՝ դրա բովանդակության յուրացմանը, ներքին շերտերի մեջ թափանցելու և ենթատեքստը հասկանալու նրբություններին և հերոսների բնութագրմանը: Բոլոր առաջադրանքներն ու հարցերը պետք է միտված լինեն այդ աշխատանքների կատարմանը: Եթե առաջադրանքների մեջ կա որոշ բառակազմական վարժություններ, դրանք ևս պետք է ուղղված լինեն տեքստի բովանդակության ընկալմանը:

Ինքնուրույն ընթերցանության դասը կարող է անցկացվել նաև հետևյալ կերպ: Երեխան տանը կարդում է հանձնարարված նյութը և կատարում <<Ինքնուրույն աշխատանքի>> համար նախատեսված առաջադրանքները: Դա նրանցից կպահանջի ուշադիր, նպատակային ընթերցում:

Դասարանում ուսուցիչը կարող է մի քանի աշակերտի նորից կարդալ տա բնագիրը, ապա անցնել տեքստի գրական վերլուծմանը: Քննարկում են նախ ինքնուրույն աշխատանքը, եթե որևէ երեխա չի կարողացել կամ դժվարացել է հանձնարարությունը կատարել, պայմաններէ ստեղխվում լիարժեք և որակյալ կրթության համար:

Կան հարցադրումներ, առաջադրանքներ, որոնք աշակերտներին հրավիրում են լավի ու վատի կամ ճշտի և սխալի մասին դատողություններ, ընդանրացումներ անելու՝ հիմք ընդունելով իրենց զգացմունքները, փորձը, նախկինում ձեռք բերած գիտելիքները։Բնութագրման միջոցով մտահանգումներ ենթադրող արտահայտությունները մեծապես նպաստում են գրական ստեղծագործության լիարժեք ու ամբողջական ընկալմանը։ Հարցադրումների թելադրանքով աշակերտները սկսում են կառուցել լուրջ, իմաստավորված գաղափարներ, անել եզրահանգումներ և նույնիսկ ստեղծել նոր գաղափարներ։ Դասանյութերի շուրջ ճիշտ ձևակերպված հարցերն աշակերտներին դրդում է մեկ անգամ ևս իմաստավորել կարդացած ստեղծագործությունը, վերլուծել դեպքերը և հերոսների գործողությունները։ Աշակերտների համար ստեղծվում է ազատ ինքնաարտահայտման հնարավորություն, նոր գիտելիքների և փորձի ողջ բազմազանության համադրում։ Այլ կերպ զարգանում է նրանց ինքնուրույն մտածողությունը և առաջադրված խնդիրներին ստեղծագործական լուծումներ գտնելու կարողություն։

Խաղը երեխայի մտավոր ակտիվության դաստիարակման արժեքավոր միջոց է։ Այն երեխայի մեջ կենդանի հետաքրքրություն է առաջացնում. զարգացնում ճանաչողությունը՝ օգնելով յուրացնել ցանկացած նյութ։ Ուսումնական գործընթացում խաղային տեխնոլոգիաների տեղն ու դերը, խաղի բաղադրատարրերի համակցումը և ուսուցումը մեծ մասամբ պայմանավորված՝ այն հանգամանքով, թե ուսուցիչն ինչպես է հասկանում մանկավարժական խաղեր գործառույթները։

Մանկավարժական գործընթացի համար հատկանշական են խաղերի հետևյալ խմբերը.

1. ուսուցողական, վարժեցնող, վերահսկող և ամփոփիչ

2. ճանաչողական, դաստիարակչական, զարգացնող

3. վերարտադրողական, ստեղծագործական

Տարրական դասարաններում ինքնուրույն ընթերցանության ժամերին կարելի է որպես ընթերցանության նյութ ընտրել ժողովրդական հեքիաթները, որոնց շնորհիվ երեխաները չեն հեռանա ազգային նկարագրից, սովորույթներից: Հեքիաթների թեմատիկ խմբի ամփոփումն ու ամրապնդումը կարելի է զուգակցել խաղով և այդ կերպ լուծել վերոնշյալ խնդիրը:

Խաղավար- Հարգելի, աշակերտներ, այսօր մեր խաղի թեման ժողովրդական հեքիաթներն են: Ձեզ տրվում են հետևյալ առաջադրանքները:

Հայկական <<Վատից էլ վատ>> հեքիաթում վեզիրը ու՞մ շնորհիվ է գտնում թագավորի տված հարցի պատասխանը: Ինչպե՞ս են կոչում այդ մարդուն:

չ	ո	բ	ա	ն

Ի՞նչ արհեստ ուներ երրորդ եղբայրը <<Երեք ախպերը>> հեքիաթում: Ի՞նչ են անվանում այդ արհեստով զբաղվողին:

ջ	ու	լ	հ	ա	կ

Դասի պլան

Դասարան՝ չորրորդ

Առարկա՝ մայրենի

Թեմա՝ Հովհաննես Թումանյանի արձանի մոտ

Տեսակը՝ հաղորդման դաս

Կահավորումը /անհրաժեշտ նյութեր/՝ Հ.Թումանյանի մեծադիր նկարը, ստեղծագործությունների ժողովածուներից, սահիկաշար

Դասի նպատակները՝

- բնագրի ընթերցումից հետո կարողանա ընկալել բովանդակությունը
- կկարողանա կապեր տեսնել բնագրի բովանդակության և դրան կից տրված նկարների միջև
- տեքստի շուրջ աշխատելիս կներկայանան կարդալու որակական հատկանիշների դրսևորման իրենց կարողություններով
- կմեկնաբանեն Թումանյանի ստեղծագործություններից մեջբերված քառատողերը
- կխորացնեն ժանրային առանձնահատկությունների վերաբերյալ ունեցած գիտելիքները
- բառային աշխատանքի արդյունքում կսովորեն մի շարք նորածանոթ բառեր և արտահայտություններ

Վերջնարդյունք՝

- սահուն ,գրական շեշտի և առոգանության պահպանունով բարձրաձայն

15

- ընթերցել տեքստը
- պատմել կամ վերապատմել տեքստը պահպանելով դեպքերի տրամաբանական հաջորդականությունը ՝ վերաբերմունք դրսևորելով նկարագրվող դեպքերի հերոսների վարքագծի վերաբերյալ
- հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնուրույնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողությունը

Դասի ընթացքը՝

Խթանման փուլում օգտագործվում է <<կռահիր ծածկագրված բառը>> մեթոդը։ Պաստառին կամ գրատախտակին նկարում է շրջանակ՝ ճառագայթներով։ Շրջանակի մեջ կպչուն թղթով ծածկում է գաղտնագրված բառը /անակնկալ/ , իսկ ճառագայթների վրա գրվում է հինգ հուշող բառ՝ անսպասելի, հանկարծակի, հանկարծադեպ, չսպասված, անկանխատեսելի։

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին գտնել ճառագայթների վրա գրված բառերին համապատասխան մեկ հոմանիշ բառ, որը ծածկագրված բառն է։

Աշակերտները հուշող բառերի և ուսուցչի ուղղորդող հարցերի օգնությամբ գտնում են ծածկագրված բառը՝ **անակնկալ։**

Այնուհետև առաջարկում է լուռ **ընթերցել <<գրավիչ մուտքի դռնակը>>** ՝ **<<Անակնկալի սպասումով>>** նյութը։

Ընթերցումից հետո ուսուցիչն հարցեր է ուղղում աշակերտներին՝ պարզելու լուռ ընթերցած նյութի ընկալման աստիճանը։ Ապա ուշադրությունը հրավիրում է գրատախտակին նախօրոք գրված դասանյութի վերնագրին՝ << Հովհաննես Թումանյանի արձանի մուտ>> և դասարանին հարց է ուղղում, թե Թումանյանի ո՞ր ստեղծագործություններն են նրանց ծանոթ։

Ուսուցիչն այստեղ օգտագործում է <<Պոպկորն>> հնարը։Աշակերտներն արագ

թվարկում են գրողի ստեղծագործությունները /հեքիաթ, բանաստեղծություն, բալլադ, լեգենդ, զրույց, պատմվածք, քառյակ/։

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչն առաջարկում է գրատախտակին գրված վերնագրի շուրջկանխատեսումներ անել դասանյութի բովանդակության վերաբերյալ։ 1-2 աշակերտների պատասխանից հետո դասանյութը լուռ ընթերցում են։ Աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով օգտագործվում՝ <<փոխներգործուն գրառումների համակարգ>> մեթոդը։

Իրականացվող քայլերն են.

Առաջին- Աշակերտներն ինքնուրույն, լուռ ընթերցում են նյութը և միաժամանակ լուսանցքում՝ հատվածի առաջ, նշումներ կատարում՝ օգտագործելով հետևյալ երեք նշանները.

V—հաստատում է իր իմացածը /գիտեմ/

+–նոր տեղեկություն է /չգիտեմ/

!– հետաքրքիր է /ուզում եմ ավելին իմանալ/

Նշումների համար կարելի է օգտագործել հետևյալ աղյուսակը.

V	+	!

Յուրաքանչյուր աշակերտ աղյուսակում նշում է կատարում։

Երկրորդ- Ընթանում է զույգերով աշխատանք։ Օգտվելով նշումներից, ձեռքի տակ ունենալով աղյուսակը՝ աշակերտը մտքեր է ձոխանակում ընկերոջ հետ։

Երրորդ- Լսվում և քննարկվում է զույգերով աշխատանքի արդյունքները։

Աղյուսակի 3-րդ բաժինը կարելի է օգտագործել տնային հանձնարարությունների համար՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկություններ քաղելու և գիտելիքները խորացնելու նպատակով։

Այս աշխատանքներից հետո, երբ աշակերտներն ինքնուրույնաբար ծանոթացել են դասանյութի բովանդակությանը, ուսուցիչն առաջարկում է դասն ընթերցել բարձրաձայն՝ կարդալու որակական հատկանիշները զարգացնելու նպատակով։

Բովանդակության համակողմանի ընկալման համար կազմակերպվում է բառային աշխատանք, որն արտահայտվում է յուրօրինակ, նախշուն, մրգահանդես, խաղիկ, նենգ, դավ, ճոն բառերի իմաստների և ուղղագրության բացատրությամբ, շունչ տալ, շունչը պահել դարձվածքների մեկնաբանությամբ, արևը շատ էր հոգնել, ման էր եկել ամբողջ օրը, գործն է ապրում դարեդար փոխաբերական իմաստներով արտահայտությունների բացատրությամբ։

Դասանյութի բովանդակության ընկալման խորացմանը կնպաստի նաև նկարների շուրջ կազմակերպվող աշխատանքները։ Ուսուցիչն առաջարկում է դիտել դասանյութին կից տրված նկարները, ընտրել բնագրին համապատասխան հատվածը, կարդալ բարձրաձայն, կապեր տեսնել բնագրի բովանդակության և նկարների միջև, նշել ընդանրություններն ու տարբերությունները։ Առաջադրվում է նաև նկարների բովանդակությունն արտահայտել պարզ համառոտ և ընդարձակ նախադասություններով։

Կշռադատման փուլ՝

Դասի բովանդակության իմաստավորումն ամրակայելու և կշռադատմանն անցնելու քայլը բովանդակության վերաբերյալ առաջադրված հետևյալ հարցերն են.

- Հեղինակի կյանքի և գործունեության ի՞նչ փաստերի և իրադարձությունների ծանոթացաք։
- Թումանյանի ո՞ր ստեղծագործությունները հիշատակվեցին դասում, նշեք վերնագրերը և արտասանեք։
- Որո՞նք են այն փաստերը, որոնք հետաքրքրեցին ձեզ։

Կատարված աշխատանքի խորացմանը նպաստում է նաև դասանյութին կից տրված 2-րդ առաջադրանքի կատարումը։ Եթե ճիշտ միացնես սյունակի և տողերի բառերը, ապա հատման կետերի տառերով կկարդաս քեզ համար սիրելի բանաստեղծի ազգանունը։

Նույն նպատակին կծառայի նաև <<Ուզում ես ավելին իմանալ>> նյութը։

Դասը կավարտվի տնային հանձնարարությամբ։

1. Սովորել սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը։

2. Վերարտադրել բնագրի բովանդակությունը համառոտ և ընդարձակ եղանակով։

3. Լրացնել աղյուսակի 3-րդ սյունակը։

Եզրակացություն

Այսպիսով՝ կարիքը մարդու գործունեության ընթացքում դիտված որևէ բանի պակասի զգացման գիտակցումն է։ Կրթական կարիքները սովորողների կարիքներն են, որոնք արտահայտվում են ուսումնառության ընթացքում դիտված գիտելիքների, հմտությունների կամ նյութատեխնիկական բազայի պակասի զգացողության կամ անբավարարության գիտակցման տեսքով։ Կրթական կարիքների բավարարման արդյունքում այն հանդես է գալիս որպես կրթական գործունեության պատճառ (շարժիչ), դրա կարգավորման մոտիվացիոն մեխանիզմի հիմք։ Դասի օրինակելի պլանի մշակումը հանդիսանում է դասընթացի կազմակերպման կարևորագույն նախադրյալը, որից կախված է դասընթացի հաջողությունը։

Ինչպե՞ս գնահատել գրական ստեղծագործության ինքնուրույն վերլուծությունն այդ դեպքում, երբ ընթերցողի կարծիքը կարող է չհամընկնել կամ տարբերվել ուսուցչի կարծիքից։ Ինչպե՞ս գնահատել սովորողների կողմից հորինված հեքիաթը կամ պատմվածքը։ Ցավոք, սովորողների գրական զարգացման ցուցիչների, դրա

մակարդակի բացահայտման և սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի գնահատման հարցին այսօր չենք կարող սպառիչ ձևով պատասխանել:

Սակայն մեր աշխատանքային փորձից կարող ենք եզրակացնել

ա) Սովորողների գրական զարգացման ցուցիչներ են գրական տարբեր ժանրերին պատկանող գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծության կարողությունները՝ հիմնական գրականագիտական հասկացությունների իմացությամբ, որոնք ամրացված են տարրական դասարանների ծրագրում:

բ) Գրական ստեղծագործության ընկալման որակական ցուցիչ կարելի է համարել աշակերտ-ընթերցողի կողմից գեղարվեստական պատկերը տեսնելու և զգալու,

20

հեղինակի մտահաղացումներին հաղորդակից լինելու, հերոսներին ապրումակցելու

կարողությունները

գ) Գնահատելով ընթերցանությունից ստացած կարողությունները՝ ցածր է գնահատվում, եթե աշակերտը լավ է վերարտադրում տեքստը՝ մտածելով այն

մասին, թե ինչ է կատարվում, ով և ինչպես է գործում:

Միջին է գնահատվում, եթե աշակերտը վերարտադրելով ընթերցվող նյութի

բովանդակությունը՝ խորհում է այն մասին, թե ինչպիսին են հերոսները, ինչու են նրանք կատարում այդ արարքները և ինչու են այդպիսին:

Բարձր է գնահատվում, եթե աշակերտ-ընթերցողը իմաստավորում է ստեղծագործության գեղարվեստական միջոցները, որպես <<հեղինակի ձեռքի գործ>> բացահայտում դրա գաղափարը և արտահայտում իր սեփական վերաբերմունքն այն մասին, ինչի մասին խոսվում է տեքստում:

Իհարկե հաշվի են առնվում տարրական դասարաններում սովորողների

հնարավորությունները և դրանց համապատասխանությունը չափորոշչային ու ծրագրային պահանջներին:

Օգտագործված գրականության ցանկ

1. БЕЗРУКОВА В.С. “Основы духовной культуры (энциклопедический словарь педагога)”, Екатеринбург, 2000г.

2. ИСАЧКОВА Л.Н., ЛЕОШКО В.П. “Образовательные нужды и потребности как объективная экономическая основа рыночного развития современного вуза”, Научный журнал, 2015г.

3. https://www.kakprosto.ru/amp/904480

4. https://center-yf.ru/data/stat/obrazovatelnye-potrebnosti.php

5 https://bstudy.net/633956/psihologiya/potrebnost_obrazovanii

6. https://www.teachmint.com/glossary/e/educational-needs/

7. Գյուլամիրյան Ջ. Հ. <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>

8. Տեր-Գրիգորյան Ա. Ե. <<Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա>>

22